№ 62 ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 1 — 1900 — ՇԱԲԱԹ ԱՊՐԻԼԻ 1 № 62

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարւան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ


Փաշա, Եւայ եւ Արմենակ Փաշայեանները խորին վշտով յայտնում են—առաջինները իրանց թանգագին որդու, իսկ վերջինը իր անմոռանալի եղբօր՝

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՇԱՅԵԱՆՑԻ**

մահը, որ տեղի ունեցաւ հինգշաբթի, մարտի 30-ին, խնդրում են ծանօթներին ու բարեկամներին շնորհ բերել հանգուցեալի յուղարկաւորութեանը, կիրակի, ամսիս 2-ին, առաւօտեան 10 ժամին, իր սեփական տանից, Арутинскій переулокъ, № 2, դէպի ս. Սարգիս եկեղեցին եւ այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը: Ամբիծքը կը կատարվի շաբաթ, երեկոյեան 6 ժամին: 1—1

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Բարձրագոյն շնորհ. Համաշխարհային հանդէս.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Երկրաշարժից վնասվածների օգտին. Նամակ Բագուից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազատ ժամեր.


## ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՇՆՈՐՀ

„Кавказъ“ լրագրի մէջ տպված է հետեւեալը.

«Մեզ հաղորդում են մի նոր Կայսերական շնորհի մասին անցեալ տարվայ դեկտեմբերի 19-ին Ախալքալաքի գաւառում երկրաշարժից վնասված ազգաբնակութեան վիճակը թեթեւացնելու համար: Այս տարվայ յունվարի 29-ին տեղի ունեցաւ Բարձրագոյն բարեհաճութիւն՝ ծառայութիւնից արձակել եւ զօրքի պահեստի մէջ հաշւել 77-րդ տենգինեան գնդից—36 զինւորների, 78-րդ Նաւագինեան գնդից—54-ի, 263-րդ պահեստի Նոր-Բայազէթի գնդից—2-ի եւ 4-րդ հրացանաձիգ բատալիօնից—1 մարդու, որոնք Ախալքալաքի գաւառի բնիկներ են: Այդ զինւորները այժմ վերադառնում են արդէն իրանց տները: Նրանց գալուստը ընդհանուր եւ աննկարագրելի ուրախութիւն պատճառեց ազգաբնակութեանը, որը Ախալքալաքի գաւառապետի միջոցով միջնորդութիւն է յարուցել արկանելու առ ոտս Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսրի իր անսահման շնորհակալութեան եւ հաւատարիմ հպատակութեան զգացմունքը»:

Թագաւոր Կայսրի ներկայ ամենաողորմած շնորհը մեծ սփոփանք եւ մխիթարութիւն պատճառեց երկրաշարժից վնասված ժողովրդին: Արձակված զինւորների առաջին խումբը, երբ Ախալքալաք հասաւ, քաղաքում տիրեց ցնծութիւն: Ուրախութեան արձագանքը զինւորների հետ անցաւ դէպի գիւղերը: Բալխօ գիւղի քահանան, գիւղական ներկայացուցիչների հետ միասին, ներկայանալով գաւառապետին, յայտնեց ժողովրդի ամենահպատակօրէն շնորհակալութիւնը: Երկրաշարժից հիմնայատակ եղած Մերենիա գիւղի բնակիչները խուռն բազմութեամբ դիմաւորեցին գաւառապետին եւ յայտնեցին, որ նրանք իրանց ներկայ ամենադժբաղդ օրերում մեծ մխիթարութիւն են զգում Կայսերական այն կրկնակի շնորհներից, որ ցոյց տրվեց նրանց նախ դրամական օժանդակութեամբ, իսկ այժմ զինւոր գիւղացիներին դարձնելով իրանց տուն, ուրտեղ ամեն մի աշխատող ոյժ շատ թանգ գնահատելի է: Նոյնը կատարեցին եւ միւս գիւղերի ներկայացուցիչները:

Ախալքալաքի տեղական կոմիտեը եւ Թիֆլիսի գլխաւոր կոմիտեը որոշեցին ժողովրդի ձայնին միացնել եւ իրանց ձայնը եւ ամենահպատակօրէն արկանել առ ոտս Նորին Մեծութեան շնորհակալութեան եւ անձնուիրութեան զգացմունքները ներկայ ամենաողորմած շնորհիւ առիթով:

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՆԴԷՍ

Այսօր, ապրիլի 1-ին, Ֆրանսիայի մայրաքաղաքում բացվում է համաշխարհային ցուցահանդէսը: Թէեւ մի քանի բաժիններ դեռ լիակատար կերպով չեն կազմակերպված, այնուամենայնիւ ցուցահանդէսի գլխաւոր մասերը այնքան պատրաստ են, որ Ֆրանսիական կառավարութիւնը որոշեց նշանակված օրը բանալ հանդէսը առանց յետաձգելու:

Մենք նուիրեցինք ցուցահանդէսին մի քանի տող եւ մատնացոյց եղանք այդ կուլտուրական խաղաղ մրցման նշանակութեան վրա: Ցանկալի է, որ համաշխարհային ներկայ ցուցահանդէսին իսկապէս աջողվէր ուժեղ զարկ տալ համաշխարհային արդիւնագործութեան ընդարձակ զարգացման եւ ազգերի տնտեսական համերաշխութեան գաղափարների յաղթանակին:

Պարիզը առաջիկայ մի քանի ամիսներում պէտք է դառնայ մեր ժամանակակից կեանքի եւ արդիւնագործութեան մի մեծ թանգարան, պարունակելով իր մէջ մարդկային մտքի եւ ձեռքի հրաշակերտները թէ գեղարուեստի, թէ գիտութեան եւ թէ արհեստի ասպարէզներում: Նա պէտք է ներկայանայ իբրեւ մի ընդարձակ հիւրանոց, որը իր մէջ կը հիւրասիրէ աշխարհի բոլոր ծայրերից եկած այցելուներին՝ ծանօթացնելու փոխադարձապէս միմեանց կուլտուրական գործունէութեան հետ: Նա մի կենտրոնական գնահատող ատեան կը լինի համաշխարհային արդիւնագործութեան առարկաների համար, որ գաղափար կը տայ ազգերի կատարած տեխնիկական առաջադիմութեան մասին:

Կովկասը փոքր տեղ է բռնում այդ ընդարձակ ցուցահանդէսում, բայց նա պարունակում է իր մէջ մեր երկրի հարստութեան բոլոր նիւթերը: Երկրագործութեան եւ ֆինանսների մինիստրութիւնները իրանց կողմից աշխատեցին մեր երկրի արդիւնագործութեան առարկաներից կազմել ժողովածուներ, պատրաստել քարտէզներ, աղիւսակներ եւ լուսանկարներ եւ կազմել վիճակագրական համառօտ նկարագրութիւններ: Եւրօպացիների համար շատ հետաքրքրական կը լինէր, եթէ բացի ժողովածուներից, մենք հանդէս բերէինք մեծ քանակութեամբ ապրանքներ եւ մրցութեան մէջ դնէինք նրանց աշխարհի միւս մասերի արդիւնքների հետ: Սակայն այդ գործը այս անգամ լաւ չը կազմակերպվեց եւ մեր երկրից մասնաւոր մասնակցողներ քիչ կան Պարիզի ցուցահանդէսում:

Մեզ յայտնի է, որ մեր երկրից պէտք է Պարիզի ցուցահանդէս գնան մասնագէտներ այցելելու ցուցահանդէսը: Շատ ցանկալի է, որ այդ անձինք առանձին ուշադրութիւն դարձնէին այն բոլոր երկիրների արդիւնագործութեան վրա, որոնց պայմանները նման են Անդրկովկասի պայմաններին եւ իրանց ձեռք բերած տեղեկութիւնները եւ արած դիտողութիւնները բերէին մեր երկիրը:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱԶԱՏ ԺԱՄԵՐ

—

**Ի՞նչ են անում կանայք**

Կը կամենայի մի փոքր էլ կանանց մասին գրուցել:

Արժէ ճշմարիտ:

Մանաւանդ այսօր...

Ամենքս ճանաչում ենք երէկվայ կնոջ. ամենքս գիտենք նրա կատարած դերը:

Հլու հպատակ իր կոպիտ, անկիրթ, շատ անգամ թէկուզ խնտելիգէնտ ամուսնուն. համր ստրուկ նրա բռնակալ իշխանութեան տակ. միշտ պարապ, բայց գեղեցիկ զարդարված տիկնիկ՝ նրա անսահման զուարճութեան համար. ամբողջ կեանքում չորս պատի մէջ փակված. վաղ առաւօտից մինչեւ կէս գիշեր տնտեսական ծանր աշխատանքի տակ հալումաշ, ուժասպառ...

Նրա գլխաւոր դերն էր երեխաներ ծնել եւ նրանց կերակրել իր կաթով, մի կաթ, որի 75 պրոցէնտը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ դառն արտասուք...

Ոչինչ հասկացողութիւն իր կոչման մասին, եւ ոչ իսկ ամենափոքր գաղափար իր ծնած մանուկը կրթել—դաստիարակելու վերաբերմամբ:

Ո՞վ էր մարդու տեղ դնում նրան. ո՞վ էր նրան մարդ ճանաչում:

Երէկվայ կինը գտնում էր իր միակ զուարճութիւնն ու հանգստութիւնը—եթէ միայն նա գիտէր ինչ բաներ են դրանք—անվերջ բամբասանքների եւ իր չարքաշ կեանքի դէմ դառն բողոքների մէջ:

Հազարից մի անգամ իր նման թշուառների հետ պատահելուց—եկեղեցում, թէ հօրանց տանը—ձեռք կառնէին այս խեղճերը բամբասանքների եւ բողոքների ահագին կծիկը եւ հազար ու մի ձեւով դէս յետ կը տային, դէն վրա կը տային նորից, մինչեւ կը հասնէր միմեանցից բաժանվելու ոչ-ցանկալի տխուր ժամը:

Ցետոյ:

Ցետոյ դարձեալ նոյն բանտը, նոյն հարեմը, նոյն տանջանքը, նոյն դժոխքը...

Եւ այսպէս միշտ, անվերջ, թէ մէկի, թէ շատերի, թէ բոլորի համար:

Ուրիշ բան էք դուք կանայքդ այսօր: Բոլորովին ուրիշ:

Ամենից առաջ դուք համարվում էք մարդ՝ բառի իսկական նշանակութեամբ:

Եւ սա է գլխաւորը, էականը:

Ձեր առաջ բաց են այսօր բոլոր դպրոցների դռները: Այդ հիմնարկութիւնների մէջ դուք կրթվում էք եւ ուսման ու գիտութիւնների պաշարով վերադառնում կեանքի մէջ:

Ձեզ վրա սրբազան պարտականութիւն կայ, հետեւապէս, լինել ձեր ամուսնու նեցուկ-օգնականը, ձեր երեխաների անձնուէր մայրը, նրանց դաստիարակը, ուղեցոյցը, ղեկավարը:

Վայելելով ազատութիւն, որ աղբիւր է ամեն բարիքների, վայելելով տղամարդկանց հետ կատարեալ հաւասարութեան արտօնութիւն, դուք այսօր պարտաւոր էք, ձեր ոյժերը եւ ժամանակը ներածին չափ, ծառայել հասարակութեան, ազգին, ընդհանուր մարդկութեան:

Նայեցէք ձեր շուրջը:

Բոլոր քաղաքակրթված ազգերի մէջ, մինչեւ անգամ եւ մեզ մօտ շատ տեղերում, ձեր ընկերուհիները՝ մինը մանկավարժ, միւսը հաշւապահ, երրորդը բժիշկ, յետոյ տելէգրաֆիստ, ատամնաբոյժ, փաստաբան, մանկաբարձ, արտիստ, տելեֆոնիստ եւ այլն, եւ այլն—գործում են եռանդով, աշխատասիրութեամբ եւ յաճախ աւելի քան պէտք է ոգեւորութեամբ: Գործում են յօգուտ իրանց անձի, իրանց ընտանիքի բարօրութեան, յօգուտ այն մեծ գաղափարի, որի անունն է առաջադիմութիւն, յօգուտ, վերջապէս, այն բարձր նպատակի, որ կոչվում է մարդկային երջանկութիւն:

Դարերով կապող-կաշկանդող շղթաներից ազատված՝ այսօրվայ կինը ամեն մի գործի մէջ ցոյց է տալիս շնորհք, ընդունակութիւն: Օր ըստ օրէ, ժամ առ ժամ նա ձգտում է աւելի ընդարձակել իր ասպարէզը, աւելի եւ աւելի արդիւնաւոր դարձնել իր աշխատանքը, իր գործունէութիւնը:

Բայց ո՛րքան դեռ քիչ էք դուք:

Եւ ո՛րչափ ցանկալի է, որ ձեր այդ փոքր թիւն աճէր, մեծանար, հարիւրապատիկ, բիւրապատիկ բազմապատկվէր.,.

Սակայն ցանկանալ միայն՝ բաւական չէ: Ամենեւին:

Մենք ինքներս էլ պիտի օգնենք, աջակցենք ձեզ:

Դարերով ձեր ձեռք ու ոտները կապած պահելուց յետոյ, բարոյապէս եւ ֆիզիկապէս ձեզ խեղդելուց յետ, մենք, տղամարդիկս՝ այժմ միայն հասկացած լինելով մեր ահագին սխալները, պէտք է ամեն կերպ աշխատենք ձեր ճանապարհը հարթել, որպէս զի դուք անսայթաք առաջ գնաք, միշտ առաջ, որպէս զի, այսուհետեւ գոնէ, կարողանաք վայելել ազատ կնոջ, ազատ մօր, ազատ հասարակական գործիչի, մի խօսքով ազատ մարդու բոլոր անհատական, անբռնաբարելի իրաւունքները:

Այժմ տեսնենք ինչ են չինում կանայք այն երկիրներում, որտեղ մարդ եւ կին ապրում են համերաշխ, հաւասար իրանց իրաւունքների եւ պարտականութիւնների սահմանում:

Ձեզ համար դժուար չէ մի քանի վայրկեան տեղափոխվել—մտքով ի հարկէ—աշխարհի այն միւս ծայրը, ամեն նորութիւնների հայրենիքը՝ Ամերիկա եւ դիտել նրա եռուն, անդադար չարժուն կեանքը:

Այնտեղ դուք կը տեսնէք, որ մի խումբ կանայք հիմնել են վերջերս ակցիօներական մի ընկերութիւն, որը երկաթուղիով միացրել է ամերիկական Ստօկտօն հարուստ քաղաքը Սերրա-Նավադա կոչված հնաշխարհիկ կուրօրտի հետ: Բոլոր ակցիօներները՝ կանայք, ճանապարհի վարչութեան անդամները կանայք, երկաթուղու վրա խոշոր թէ մանր ծառայողները, վարպետները, մեքենավարները, ամենքը, ամենքը՝ կանայք:

Իսկ տղամարդիկ:

Տղամարդիկ՝ պասսաժիրներ եւ... թամաշաչիներ:

Եւ որքան սիրուն եւ հետաքրքրական բան է տեսնել երկաթուղու այդ գնացքը: Վագոններում տղամարդ-ճանապարհորդները նստած, կին-մեքենավարի ղեկավարութեամբ, կին-կօնտրօլէօրի եւ կին-կօնդուկտօրների կառավարութեամբ՝ գնացքը թռչում է բարձրաբերձ լեռների ստորոտներով, կուսական թանձրախիտ անտառների միջով եւ գալիս կանգ է առնում կայարանի առաջ, որտեղ դուրս են գալիս նրան դիմաւորելու՝ դարձեալ կին-պաշտօնական անձինք:

Շուռ գանք դէպի Ֆրանսիա:

Դուք, անշուշտ, ճանաչում էք Պարիզը՝ երկրային այս դրախտը, լուսաւորութեան եւ քաղաքակրթութեան կենտրոնը:

Այնտեղ հրատարակվում է երեք տարուց ի վեր «La Fronde» անունով մի ամենօրեայ լրագիր՝ գրական-քաղաքական ազատամիտ մի թերթ, որի թէ խմբագիրը, թէ հրատարակիչը, թէ աշխատակիցները ամենքն էլ կանայք են, ձեզ նման խեղճ, բայց ձեզանից «մի փոքր» աւելի գործունեայ կանայք:

La Fronde նշանակում է պարս, որով հին ժամանակներում փոքրիկ եւ թոյլ Դաւիթը կռւեց մեծ եւ հզօր Գողիաթի հետ, յաղթեց նրան եւ սպանեց:

La Fronde ունի եւ ուրիշ պատմական նշանակութիւն: Բայց շատ հեռու չը գնալու համար աւելի լաւ է թողնենք: Այդ թերթն իր սկզբնաւորութեան օրից կատաղի կռիւ է մղում կանանց վերաբերմամբ գործադրված անարդարութիւնների դէմ, հին, փտած-անպէտքացած սովորութիւնների, մի խօսքով խաւարի դէմ:

Հաւատարիմ իր անունին, իր կոչման՝ այդ համակրելի թերթը հանդիսանում է իբրեւ զօրեղ եւ համարձակ պաշտպան գեղեցիկ սեռի

